



43. ՀԱՍԱՐ-ԲԱՍԱՐՆ ՈՒ ՔՈՌԻ ՏՂԱ ՓԻՆՍԸ

էլել ա, չի էլել մի թագավոր. ունեցել ա մի կնիկ, օխտը տղա, էդ տղերանց քիր չի էլել:

էդ թագավորը մեռել ա, էս կնիկը մնացել ա ոռֆերի: Դա զնացել ա մի դևու հետ մի անդամութեն արել, երկուֆոգացեր ա:

էդ կնգա վատենին մոտացել ա, իր պուճուր տղեն զնացել ա հանդը ասել ա.— Նանի՛, էսօր թե ազատվես՝ թե աղջիկ բերես, ջահրեն կդնես կտերը, թե տղա բերես, եզան լուծը կդնես կտերը:

էդ կնիկը ազատվում, բերում ա մի աղջիկ, ջահրեն տանում ա դնում կտերը:

էդ տղեն մտիկ ա անում, տենում, որ մերը ազատվել ա, աղջիկ բերել, ջահրեն կտրեն ա դրել: Ուրախանալով էկել ա տունը: Մանուկը ութօրական ա դառել, բերել են օխտը ընգնանին դրել են կրակին, դուս են էլնում մեծարքի՝ հարևաններին կանչելու, որ՝ «Կնունք ենք անում, մեր քիրը կնքում ենք»:

էկան տեսան, որ էդ պղինձներում ոչ մինումն էլ կերակուր չկա, պղինձները դատարկված վեր դրած են:

էս խալխը, սա ասավ՝ «էս ո՞նց էլավ», նա ասավ. «էս ո՞նց էլավ. էս ի՛չ բան էր, որ խորակը հատավ, պղնձնում կա ոչ»:

էդ պուճուր տղեն հնարով էր, ասավ.— Ես լավ գիտեմ, էս

րեխեն իմ հորիցը չի, էս տուն էլ ուրիշ էկող չի լել, էս րեխեն Դևից ա:

Տղեն գնաց տեհավ, որ րեխեն շատ մենծացել ա բարուրի մի-
ջին. գնաց եդ քաշեց, տեհավ, որ էն պղնձի շիլափլավից րեխի
պոռնեքի վրա կպած ա:

Պուճուր տղեն էս որ տեհավ, ասավ.— Նանի՛, հացը գիր
ուտեմ, ևս գնում եմ մի երկրի վրա:

Մերը ասավ.— Զա՛ն էրթաս, ջհանդա՛մը: Զկել հիմի՛ վա՛յ
մի քիր, վա՛յ մի քիր, հիմի քիրն էլավ՝ վեր ես կենում կորչես.
գվորն դենը ուղում ես, կորի՛:

Ասում ա.— Նանի՛, ինձանե ինչ ես նեղանում, իմ հոր ապ-
րուստն էլ, իմ վեց ախպերն էլ քեզ, իմ տուն ու տեղն էլ քեզ, ես
դնում եմ,— ասում ա,— մի երկրի վրա:

Վեր կացավ դա գնաց մի աշխարի վրա: էդ բարուրը մենծա-
ցավ, էգ աշխարում ինչ ջին-ջանլու կար, ինչ ֆողի իրեսին ման
էկող կար՝ կերավ, թամիզ կերավ, էթող մի դարբին:

էս տղեն գնաց տեհավ, որ մի դզում շոբան՝ էրկու աչքերը հա-
նած. տեհավ, որ մի ոչխարն արել ա մի կածան, էդ ոչխարը
կարմնջի պես շեղք արել, ինքը ջխտում ա, ասում ա.— Զո՛ւխտ,
ջո՛ւխտ, մին էլ ջո՛ւխտ:

Որ ջխտում ա, էդ տղեն ոչխարի հետ անց ա կենում: Ձեռն ա
տալի, տենում ա, որ ոչխարի հետ մի ջանլու անցկացավ:

Ասում ա.— Ի՞նչ ես. ջինս ես, որ ձեռքիս տակովն անց կաց-
րուց: Աստված սիրող, ինչ որ իր՝ լիս ընկի, լիս ընկի տենամ, ի՞նչ
ջանլու ես:

Ասում ա.— Հայրի՛կ, ես եմ, թե կունդունես՝ քի տղա ըլիմ ես:

Ասում ա.— Խի՞ չեմ ունդունի, որ քի պես որթի դա, էրկու
աչք ունեմ, էն էլ կուր, ինչպե՛ս քի չեմ ունդունի:

Իրիկուն ոչխարի հետ գալիս են էդ կուր մարթու տուն:

Ընավտը որ ոչխարը դուրս են անում, ասում ա.— Որթի՛,
ո՞նչ Մենձասարի վրա կանես, ո՞նչ Պուճուր, մեկէլ ո՛ր հանդի վրա
կուզես՝ տա՛ր:

Ասում ա.— Ինչպե՛ս էն սարերի վրա տանիմ ոչ:

Ասում ա.— Սս քեզ ասում եմ, որ տանիս ոչ:

Ասում ա.— Որ ասել ես, ես էլ տանիլ չեմ:

էդ շոբանին խափում ա: էդ օրը ոչխարը տանում ա Պուճուր
սարի վրա: Ոչխարը գնում ա էդ սարի վրա արոտ անում:

Խամ սա՛ր, որ դուռն էլ էդ սարերով չի անցկացել, մեկ էլ տես-
նում ա, որ մի աղջիկ դուրս էկավ:

Ասում ա.— Ախպե՛ր, արի ըստեղ, գլուխդ քթվեմ:

Ասում ա.— Գնալ պտիմ, տենամ սա ինձ ի՞նչ կանի, նա մի աղջիկ, ես մի տղամարդ, տենամ ինձ ի՞նչ կանի դա:

Գնաց կուշտը:

Ասավ.— Ի՞նչ ես ասում:

Ասավ.— Ախպե՛ր, նստիր գլուխդ քթվեմ, իմ ախպոր նման ես:

Գլուխը դրուց գոքումը: Էս աղջիկն ունի է՛լ հընկերտինք. էդ տղին խափում ա, մթամ թե գլուխը քթվում ա, բայց խափում ա, էն մեկել քորը ղի ա տալի.— Ախչի՛, քըլփաթինը բիր, քլփաթինը, մաշեա տո՛ւ:

Էս տղեն հսկացավ, որ դա ինչ ա ուզում անիլ: Վեր կացավ, տեհավ էն մեկ աղջիկը քալփաթինը բերուց:

Ասավ.— Անզգա՛մ, հորս աչքերն էլ էդպես եք հանել.— ասեց ու վեր շարդեց:

Մրանք մինաթվեցին, ասին թե.— Քու հոր աչքերը քեզ կըտանք, մեզ տանիլ մի՛, մեզ ծեծիլ մի՛:

Սա անկանջ չարավ, հոր աչքերը առավ սրանցից, սրանց աղաք արավ ոչխարի հետ, ամեն բան, հնարները խլեց, բերուց իրիկունը հոր կուշտը:

Ասում ա.— Ոնց որ հորս աչքերը հանիլ էք, էնպես էլ դրեք տեղը, շինեցեք:

Հոր աչքերը դրին տեղը:

Ըռավոտը հերը դուրս էկավ, ասեց.— Որթի՛, ինձ անկանջ արա, Պուճուր սարի վրա տարար, Մենձ սարի վրա տանես ոչ:

Դա էլի խափեց դրան:

— Չեմ տանիլ,— ասավ:

Գցեց Մենձ սարի վրա ոչխարը:

Էդ աղջկերանց թլըսմի ճիպոտը ձեռին գնաց, որ ոչխարը արոտն արավ, մեկ էլ տեհավ, որ մի Վուշաք ա գալի ներքի պոռը գետնին քաշ ա տալի, վերի պոռը ծնկներին տալի:

Վուշաքն ասում ա չորանին.— Ղուշն իր թևով, օձն իր պորտով էս սարը չէ էկել, իսան-օղլի, դու քանի՞ գլխանի ես, որ էկել ես էս սարը:

Ասում ա.— Նամարդութենը մի բան չի, համեցեք ջոմարդութենով բռնեք:

Էն ժամանակ Վուշաքի տեղին հասնելու հադաղ էդ աղջկերանց քալփաթինով տղեն Վուշաքի աչքերը հանեց: Մեկ էլ, որ թլըսմի ջիբութը վրա բերուց, թլացավ Վուշաքը: Էն ժամանակը

նետ ու անեղը քաշեց Վուշաբին կտորեց: Գնաց տե՛հավ, որ էն Վուշաբը մի ջուխտ Հասար-Քասար¹ մի ջըղացաքարից կապել ա:

էդ Հասար-Քասարը ճըզացքարի և ոչխարի հետը քշեց, ոչխարի հետը բիրուց, էկավ հոր կուշտը: Ընավոտը լիսացավ:

Ասավ.— Այ հեր, Մենձ սարն էլ բաց արի, Պուճուր սարն էլ բաց արի, էդ էլ քու ղուլլուղքերը, ըղաքիդ քոծերը: Ծս գնամ մին իմ հոր վելյաթի վրա: Ամա,— ասում ա,— որ իմ տեղը նեղվի, էդ Հասար-Քասարնին դես-դեն կձգձգատեն, էն ժամանակ իմացիր, որ իմ տեղը նեղ ա, վեր կթողուս գան:

էդ տղեն ձիուն վեր ըլում, գնում է իր հոր շենլիքը: Մտիկ ա անում էն աղջիկ, էն վուշաբ աղջիկ, որ վելյաթը կերել պրծել չի, որ մի մըլակի պես բան գալիս ա դըբա դրան ղու ա ըլում: Գնում ա տեսնում, ա՛յ իր ախպերը: հենց հասնելու քիմի ձիու մի ոտը կուլ ա տալի:

Ասում ա.— Ախպե՛ր, ձիդ իրեք ոտնանի ա՛:

Ախպերն ասում ա.— Հա՛, քիրա ջան:

Քիրը ձիի մի ոտն էլ ա կուլ տալի, ասում ա.— Ախպեր, ձիդ էրկու ոտնանի էկավ:

Ասում ա.— Հա՛, քիրա ջան:

Մինն էլ ա կուլ տալի:

Ասավ.— Ախպե՛ր, ձիդ թագոտնանի է էկել:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Մի ոտն էլ կերավ ձիու:

Ասավ.— Ախպե՛ր, ձիդ փորսո՞ղ ա էկել:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Ձին թամիդ կուլ տվուց, մնաց անձի:

Ասավ.— Ախպե՛ր, հետավակ էկա՞ր:

Ասավ.— Հա՛, քիրա ջան:

Ասավ.— Ախպե՛ր, դուն պիտի սազ ածես, կըտերը սազ ածա, ես էրթամ քեզ համար կըրակուր պատրաստեմ:

Սա դնաց դարբնին ատամները սրել տալու:

Տղի կշտին կըտըրիցը մի մուկ դուրս էկավ:

Մովն ասավ.— Ա՛յ տնաքանդ, նա քեզ համար կերակուր էփելու չի գնացել, գնացել ա, որ դամըրչուն ըտամները սրել տա, գալ պտի քեզ ուտի:

Տղան ասավ.— Բա ի՞նչ անեմ:

¹ Երևակայական կենդանի—Մ. Բ.:

Ասավ.— Սարոկները հանի ֆողով լըքցըրու, կտրիցը կախ արա, առ,— ասավ,— էս մի ճրագը ձեթով լիքը, առ էս մի սրոցը, քարե սրոցը առ,— ասավ,— էս մի գլուխ սանդրեյու սանդրը, առ,— ասավ,— էս մի ջուխտ մոմը:

Ասավ.— Որ էս բոլորը տվիր, նրանց հունարը ասա, ես ո՞նց անեմ:

Մուկն ասավ.— Եղնուցը որ տենաս հասավ, առաջը սրոցը վեր գցի, եդի անգամը, որ տենաս հասավ, սանդրը վեր գցի, գնա, նրբանից եդը, որ տենաս հասավ, էն մի ճրագ ձեթը վեր գցի գնա: Նրբանից եդը, երբ տենաս տեղդ նեղ ա՛ մոմը վեր գցի:

Մուկն ասավ.— Դե ինձ տուր շոնգուր, դու փախիր, կորիր:

Դա փախավ, կորավ:

Քիրն էկավ տանը տեհավ սարոկները ընդի ա, Մուկն էլ սագն ա ածում, նա գիտի, թե ախպերն ընդի ա, գիտի ոչ, թե փախել ա:

Ասում ա.— Ախպեր, դըվեր արի: Կերակուր եմ պատրաստել, դըվէր արի, հաց ուտենք:

Մուկը ընդի սագն ածում, ծընկծնկացնում ա:

Մեկ էլ դի է տայի, ասում ա.— Ախպե՛ր, դըվեր արի, թե չէ դըվեր եմ բերում, խի՞ չես դըվեր գալի:

Մադար, որ ջիգըրը գալիս ա, քաշում ա սարոկները, ֆողն աչքերն ա դառնում, տեսնում ա, որ աղբեր չկա:

Մուկը ընդի ածում, ծընկծնկացնում ա, ինքն աչքերը ըղաղում ա, աչքերը իստակում ա, որ կըտուր պրտի դուրս ջլլի, գիտի թե աղբերն ընդի ա, թիքա-թիքա պիտի անի:

Գնաց կտուրը դուրս էլավ: Գնաց կըտուրը, դուրս ըլելու բաշ, Մուկը սազը վրա արավ ու փախավ: Դա էն մկի ծակը քանդեց, դես արավ, դեն արավ, տեհավ, որ աղբերը գնացել ա, աղբեր չկա ընդի:

էդ ժամանակ կըտերը նստավ, միտք արավ, որ աղբերը փախել ա, դա ըղլու էլավ աղբոր եղնուց: Գնաց հասվե հաս էլավ:

Աղբերը, եղ մտիկ արավ, տեսավ մի դըշի կատար գալիս ա: Մըխելի էլ գնաց, եդ դարձավ տեհավ, որ իսան ա:

Մին էլ եդ մտիկ արավ, տեհավ, որ հա՛, հա՛ հասնում ա: Սրոցը վեր գցեց: Դառավ սալկութ, անցկենալու չի, աղբերն էն կոանը մնաց, քիրն էլ՝ էս կոանը:

Ասավ.— Աղբե՛ր, աղբե՛ր, դըվո՞րն անցկացար, դըվո՞րն անցկացար:

Ասավ.— Ոնց ես եմ անցկացել, դու էլ հընե անց կաց, ես ի՞նչ անեմ:

Զրկելը գրուիլը շտորեց, չըկելը տանջեց, նա անցկացավ, խելի գնաց:

Տղան մին էլ եդ մտիկ արավ, տեհավ, որ մի ճանճի ղոտար գալիս ա, մին էլ եդ արավ, տեհավ, որ մի ղրշի կատար գալիս ա:

Մին էլ եդ դարձավ եդ, տեհավ, որ մի իսանի ղատար գալիս ա:

Մեկ էլ եդ արավ, տեհավ, որ հա՛հասել ա, հասվե հաս է եղել: Սանդրը վեր գցեց, դառավ ծմակ ճնճըխոտ:

Ասավ.— Աղբեր, աղբեր, դըվո՞րն անց կացար, ինձ էլ ճանապարհ շանց տուր, ես էլ գամ:

Ասավ.— Ծս ոնց որ անց եմ կացել, դու էլ անց կաց, ես ի՞նչ անեմ:

Մեկ էլ մտիկ արավ, տեհավ, որ գալիս ա, մին էլ եդ մտիկ արավ, տեհավ հասվեհաս ա, ճրագը վեր գցեց, դառավ ծով, ճրագը մեջին ճըղացքար:

Ասավ.— Աղբե՛ր, աղբե՛ր, դըվո՞րն անցկացար, դըվո՞րն անցկացար:

Ասավ.— Ճըղացքարը ճիտդ գցի, ճիտդ գցի, կարող էս գալ:

Ճըղացքարը գցեց ճիտը, տարավ ծովի տակը, մեկ էլ առավ գըլուխը, մին տակն ընկավ, մին էրեսը չկել շարշարվեց տղեն խելի գնաց:

Վուշաբն էկավ ծովուց դուրս էլավ:

Մին էլ եդ մտիկ արավ, տեհավ, որ դալիս ա, մին էլ եդ մտիկ արավ, որ հասվե հաս ա: Մին էլ որ մոմը վեր գցեց, մոմը դառավ մի ջուխտ շինարի ծառ: Տղեն մի ծառի ծերին, էդ Վուշապը հասավ մի ծառը կոծեց, որ շատ կոծեց, էդ տղեն տեհավ, որ էդ ծառը վեր ա՛րնկնում, թռավ ելավ մընի ծերը:

Նրա հերն վեր չթողուց Հասար-Բասարը՝ Հասար-Բասարը ջըղացքարը քաշ տալով էկավ-էկավ տեհավ, որ էդ ծառը հա՛հ, էն կերել ա, որ վեր ընկնի, դեը տղին հասնի:

Տղեն ասավ.— Հասար-Բասար, հասար մուրաղիս, նրան հենց հուսի տուր, հենց կուլ տուր, որ դրան մի պուտ արուն վեր չընկնի:

Դրանք որ հուսի տվին, կուլ տվին, ամենքը մի կոնիցը, որ բռնեցին, իրար վրա քաշեցին, դրանից մի պուտ արինը դետին կաթեց:

Գետնի երեսից արինը ասեց.— Աղբե՛ր, վեր ունիս՝ փեշմանիս, թե վեր դնես՝ փոշմանիս:

էդ աղբերն ասավ.— էդ մի պուտ արինը ինձ ի՞նչ պըտի անի: Հըլա վեր ունիմ, տենիմ էս արինն ինձ ի՞նչ պըտ անի:

Վե կալավ տերևի վրա, պլուկեց դրուց շորը: Հասար-Բասարն
եդ արավ ընկավ ճամփա:

էդ պուտ արինը տղի անդամը ծակեց, ծծեց, նի մտավ: էդ
տղեն դնաց ճամրին մի րազրդան ուստ էկավ, օխտը հակ ղաթիլ
ոսկի բառցած: էդ Հասար-Բասարը բազրզանի աչքին խիստ դժար
էկան:

Ասավ.— Աղբեր,— իր ձեռին մի փետ կար,— թե էս փետի
անունը գտնե՛ս, իմ օխտը հակ բարձած ղաթիրը խազինի հեա
քեզ ըլի, թե դտնիս ոչ, քո Հասար-Բասարը ինձ ըլի:

էդ պուտ արինը ջիրեն ասավ.— Աղբե՛ր, ասա շիմշիրի ա,
շիմշիրի ա:

Տղեն ասավ.— Աղբե՛ր, ի՞նչ դես դեն ման գամ, էդ ա փետիդ
անունը շիմշիրի ա:

Փետի անունը գտավ, օխտը ղաթրենբր բարձած ոսկին իրան
տարավ:

Որ էդ ղաթրենբրն աղաք տարան գնացին, մի պուտ արինը
շերից էնքան ծծել էր, որ էն մեկ անդամ շուխցրել էր:

Հասար-Բասարը տղին ասին.— Կանգնի:

Բաց արին տեհան, որ անդամը բարբանդ ա դառել, էնքան լի-
զեցին Հասար-Բասարը, լեղուն միջիցը հանեցին:

Կնաց հասավ տուն:

Ասեց.— Հեր, քեղ ասի, որ Հասար-Բասարը երբ կձգձգացին,
վեր թող գա, իմացի, որ իմ տեղը նեղ ա: Մուխաննաթ էիր, որ
անլիզու անասունի զգար է՛հիբար շունեիր, որ վեր թողնեիր գա-
լին, քո կուր աչքերը ես սղացրի, քո ղզուշաց աթբիրը ես բաց արի:

Ասեց.— Նս հեշ ոլխի չեմ էլել, հասկացել չեմ:

Տղի բերած ոսկին բերին, օխտն օր, օխտն դիշեր հրսանիք
արավ, կերան, խմեցին, քեփ արին: Նրանք հասան իրենց մուրա-
զին, դուն էլ հասնես քո մուրազին:

Աստուծանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝
լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին:

